ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, համաձայն իր գործող կանոնադրության և ՀՀ ԳԱԱ անդամների ընտրության կարգի, հայտարարում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններ՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

Մասնագիտություններ	Թափուր տեղերի քանակը
Իսկական անդամներ (ակադեմիկոսներ)	
1. Լազերային ֆիզիկա	1
2. Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա	1
3. Ռադիոֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1
4. Ֆիզիկական քիմիա	1
5. Բժշկագիտություն	1
6. Բուսաբանություն	1
7. Պատմություն	1
8. Արևելագիտություն	1
9. Իրավագիտություն	1
10. Սոցիոլոգիա	1
11. Գյուղատնտեսական մեքենաշինություն	1
Թղթակից անդամներ	
1. Մաթեմատիկա	1
2. Ինֆորմատիկա	1
3. Միկրոէլեկտրոնիկա(տեխնիկական գիտություններ)	1
4. Լազերային ֆիզիկա	1
5. Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա	1
6. Ռադիոֆիզիկա	1
7. Տարրական մասնիկների ֆիզիկա	1
8. Օրգանական քիմիա	1
9. Երկրաբանություն	1
10. Մոլեկուլային կենսաբանություն	1
11. Շրջակա միջավայրի ուսումնասիրություն	1
12. Բժշկագիտություն	1
13. Հնագիտություն	1

14.	Արվեստագիտություն	1
15.	Գրականագիտություն	1
16.	Լեզվաբանություն	1

Համաձայն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրության 68 և 69 կետերի.

Ակադեմիայի ակադեմիկոս ընտրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող և միջազգային ճանաչում ստացած աշխատանքներով:

Ակադեմիայի թղթակից անդամ ընտրվում են Հայատանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են բարձրակարգ գիտական նշանակություն ունեցող գիտական աշխատանքներով:

Ակադեմիայի ակադեմիկոսի թեկնածության առաջադրումը վերապահվում է ակադեմիայի ակադեմիկոսներին, թղթակից անդամի թեկնածության առաջադրումը՝ ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից անդամներին: Ակադեմիայի անդամների թեկնածուների առաջադրումը վերապահվում է նաև պետական գիտական կազմակերպություններին, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաև ոչ պետական խոշոր գիտատեխնիկական կենտրոններին: Թեկնածուներն առաջադրվում են գիտական, գիտատեխնիկական խորհուրդների նիստերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ, ըստ համապատասխան մասնագիտության:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուները կարող են առաջադրվել և քվեարկվել միայն մեկ մասնագիտության գծով:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների առաջադրումները համապատասխան հիմնավորմամբ և թեկնածուի գրավոր համաձայնությամբ ներկայացվում են ՀՀ ԳԱԱ նախագահություն՝ ընտրությունների անցկացման մասին հայտարարության հրապարակումից հետո, մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թեկնածության առաջադրմանը կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ մեկ օրինակից.

1. գիտական, գիտատեխնիկական խորհրդի որոշումը կամ նամակ թեկնածուի առաջադրման մասին՝ համապատասխան հիմնավորմամբ
2. քաղվածք թեկնածության առաջադրման նիստի արձանագրությունից՝ նշելով մասնագիտությունը, որի գծով առաջադրվում է թեկնածուն և քվեարկության արդյունքները
3. ինքնակենսագրություն (ձեռագիր)
4. կադրերի հաշվառման անձնական թերթիկ
5. գիտական աշխատությունների ցուցակ
6. գիտական աշխատանքների մասին մամուլում, գիտական ամսագրերում հրատարակված գրախոսականների և գիտական կարծիքների պատճենները
7. բարձրագույն ուսումնական հաստատության, գիտական աստիճանների դիպլոմների և գիտական կոչման ատեստատի պատճենները
8. բնութագիր աշխատանքի վայրից
9. լուսանկար 4x5 չափի
10. անձնագրի և սոց.քարտի պատճենները

Նշված փաստաթղթերը ներկայացնել հետևյալ հասցեով.
Հայաստանի Հանրապետություն, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող.24, ՀՀ ԳԱԱ նախագահության կադրերի բաժին մինչև ս/թ նոյեմբերի 25-ը ժամը՝ 17-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ